Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԿԱՊՈՒՑՏ ԾԱՂԻԿ

Չգիտեմ, բուսաբաններին ծանո՞թ է այդ ծաղիկը...

Մենք՝ տասներորդ դասարանների տղաներս և աղջիկներս, էքսկուրսիա կազմակերպեցինք դեպի Շիրակի սքանչելի, բայց ոչ մի բանով աչքի չընկնող դաշտերը: Խոստովանում եմ, մենք այդ արեցինք ոչ թե նրա համար, որ զգում էինք դրանց անորսալի գեղեցկությունը, այլ որովհետև դրանք էին կազմում մեր քաղաքի շրջապատը:

Խոսակցություններով ու ծիծաղով, մոտ հարյուր հոգի, մենք անցանք քաղաքի փողոցներով, անցանք դրա հյուսիսային ծայրամասով: Եվ երբ մենք ետև թողեցինք քաղաքի վերջին շենքերը ու դուրս եկանք դաշտ, բոլորս միաժամանակ դադարեցրինք մեր խոսակցություններն ու ծիծաղը և նայեցինք՝ ակնածանքից և հիացմունքից լռած:

Քաղաքին սահմանակից, բայց քաղաքի եռուզեռին անհաղորդ, փռվել էր մեր դիմաց Շիրակի խաղաղ դաշտը: Դարերի շունչն էր գալիս նրանից, պատմության հոտը: Բայց միաժամանակ նա այնքան թարմ էր ու նոր՝ իր կանաչ խոտով, անթիվ-անհամար բազմագույն ծաղիկներով, որ կարծես ոչ թե անցյալի, այլ ապագայի դաշտ էր այն...

Ճանապարհի եզրերին կանգնած, մենք լուռ նայում էինք դաշտին և չէինք վստահում մտնել այնտեղ: Նա մեզ թվում էր խնամքով մշակված ծաղկանոց, և մենք չէինք կարող տրորել այն: Բայց և այնպես մենք եկել էինք դաշտի համար, ուստի և, վերջապես, մտանք այնտեղ՝ մեր առաջին քայլերը փոխելով անհամարձակ, զգուշությամբ:

Ինչ-որ անորսալի թախիծ փռվել էր դաշտերի վրա: Շուտով մեզ ևս համակեց այն: Մենք հիշեցինք, որ այսօր վերջին անգամն ենք մենք միասին, իսկ վաղը, դպրոցն արդեն ավարտած, ցրվելու ենք զանազան կողմեր... Լուծվելու է մեր փոքրիկ կոլեկտիվը, մեր փոքրիկ հասարակությունը, որտեղ այնքա՛ն տարիներ ծանոթ էինք մենք միմյանց: Մենք նստել էինք իրար կողքի, մենք օգնել կամ խանգարել էինք իրար, մտերմացել կամ խռովել էինք միմյանց հետ, ունեինք մեր առաջավորներին ու հետամնացներին, մեր ընդհանուր սիրելիներին և ուշադրությունից վրիպածներին, մեր զվարթներին ու լուրջերին, պատի լրագրի խմբագիրներին ու աշխատակիցներին, դասարանի օրագիրը գրողներին ու բանաստեղծներին, հերթապահներին ու հիվանդներին, առողջացածներին ու միշտ հարբուխ ունեցողներին: Միատեղ սովորելու մեր տարիներին մենք հաճախ էինք զգացել ուրիշ դպրոց կամ ուրիշ քաղաք տեղափոխված մեր ընկերների կորուստի կսկիծը, մեզ մոտ տեղափոխվածներին ընդունելու ուրախությունն ու հետաքրքրությունը: Որքա՞ն դասարանական և դպրոցական դեպքեր էին անցել մեր գլխով այդ տարիներին, որքա՛ն էինք հուզվել և ուրախացել, տխրել կամ զայրացել: Բորբոքվել էին կրքեր, վիճաբանություններ, եղել էր համադասարանական համերաշխություն, եղել էր

տաքարյուն մրցակցություն՝ մյուս դասարանների և մեր միջև, ապա՝ համերաշխություն նաև նրանց հետ... Տղաներս և աղջիկներս բաժանվել էինք առանձին բանակների և վերևից էինք նայում իրար, ապա եղել էին ընդմիջումի ժամանակ չգիտես մեզանից որի ձեռքով գրատախտակի վրա կավիճով արված գրություններ՝ այսինչ տղա, պլյուս՝ այսինչ աղջիկ, հավասար է սիրո... Լաց, եռանդուն հերքումներ, դիմում՝ ուսուցչին և նույնիսկ դպրոցի վարիչին, ամեն տեսակ փոխհարաբերությունների խզումն՝ բանից անտեղյակ այն տղայի հետ, որի անունն այնքան անհիմն կերպով կապել էին նրա անվանը...

Այդ ամենը և դեռ ուրիշ շատ, շատ բաներ այլևս կազմում էին մեր ոչ թե ներկան, այլ անցյալը: Վաղը մենք ներողամիտ ու թախծոտ ժպիտով պիտի նայեինք այդ ամենին՝ մեր կյանքի նոր շրջանի համեմատական բարձրությունից...

Մենք ցրվեցինք ընդարձակ դաշտով մեկ՝ ավելի և ավելի ընդարձակելով տարածությունները մեր միջև: Ոմանք սկսեցին ծաղիկներ հավաքել, ոմանք՝ մեջքի վրա պառկած, անթարթ նայել կապույտ և խոր երկնքին: Շատերը զույգ-զույգ, թևանցուկ, տղան տղայի հետ և աղջիկը աղջկա, շրջում էին և կամացուկ զրուցում: Շրջում էին նաև երկսեռ զույգեր, բայց դրանք քիչ էին:

Շրջելիս և ծաղիկներին նայելիս մենք երբեմն նկատում էինք, որ մոտեցել ենք իրար: Բարձրացնում էինք մեր գլուխները, նայում իրար և ժպտում՝ մի քիչ տխուր: Մոտակա բաժանման զգացումը հավասարապես սիրելի էր դարձրել մեզ համար մեր հասարակության բոլոր անդամներին, նույնիսկ նրանց, որոնց հետ մտերիմ չէինք եղել մինչև այդ, անտարբեր էինք եղել, կամ չէինք նկատել, կամ, նույնիսկ, հակակրել էինք: Երբեմն թվում էր մեզ, թե մենք վաղուց արդեն բաժանվել ենք իրարից և այդ դաշտը կյանքն է, որտեղ մենք շաղ ենք եկել զանազան կողմեր: Իսկ մեր հանդիպումները՝ դրանք հանդիպումներ են տարիներ հետո, երբ մենք, արդեն տարիքոտ մարդիկ, տարբեր կողմերից եկած, կանգ էինք առնում մի պահ՝ թախծոտ հիշելու մեր դպրոցական անցյալը և նորից ցրվելու զանազան կողմեր...

Դիմացից դեպի ինձ եկավ մեր դասարանի աղջիկներից մեկը: Նա պատկանում էր աչքից վրիպածների թվին: Նրա ծնողներն ապրում էին ինչ-որ հեռու քաղաքում, նա ինքն ընդամենը մի տարի առաջ էր եկել այնտեղից և ընդունվել տասներորդ դասարանը: Մենք՝ առաջին օրերը հետաքրքրությամբ նրան բոլորած, շատ շուտով հիասթափվել էինք նրանից և սառել: Նա տրամադրություն ցույց չէր տվել մտերմանալու մեզանից ոչ մեկի հետ և ոչ էլ բոլորի՝ միասին վերցրած:

Բայց նա ոչ գոռոզ էր, ոչ մարդախույս: Նա պարզապես լռակյաց էր և պասսիվ: Մենք աղմկում էինք, չարություններ անում, բղավում, ծիծաղում, երգում, կռվում, հաշտվում, իսկ նա իր համար նստած էր: Մենք պատասխանում էինք դասը, իրար ուղղում, ուսուցչի առաջարկությամբ վիճաբանություն սկսում, իսկ նա դարձյալ հանգիստ նստած էր: Բայց նա անընդունակ աշակերտուհի չէր: Երբ էլ հարցնեին նրան, նա պատասխանում էր դասը՝ առանց զարմացնելու սքանչելի պատասխաններով, բայց միանգամայն գոհացնելով ուսուցչին և բոլորիս:

Հասարակական կամ ընկերական գործերից նույնպես, նա չէր խուսափում, բայց ինքը չէր նախաձեռնում կամ սկսում որևէ բան: Իսկ երբ դիմում էինք նրան, ամեն անգամ նա հոժարությամբ ստանձնում էր առաջարկված պարտականությունը և բարեխղճորեն կատարում:

Այդպիսով նա շատ շուտով մտավ աչքից վրիպածների շարքը, ավելի ճիշտ՝ նա առաջին աչքից վրիպածն էր ողջ դասարանում: Եթե դասերից հետո մեզանից մեկնումեկը հարց տար՝ ներկա՞ էր արդյոք այդ աղջիկն այդ օրը դասերին, ոչ ոք չէր կարողանա պատասխանել որոշակի, ոչ ոք չէր հիշի:

Միայն իր արտաքինով նա կարող էր չվրիպել աչքից, որովհետև գեղեցիկ աղջիկ էր: Բայց դպրոցական մեր անմեղ, դեռ կիսամանկական փոխհարաբերությունների մեջ արտաքինը չէր խաղում համարյա ոչ մի դեր, մեզ մոտ դեռ հավասար էին բոլորը՝ գեղեցիկ, թե տգեղ:

Աղջիկը եկավ դիմացից և անչափ զարմացնելով ինձ, կանգ առավ իմ առջև: Ես չէի հիշում մի դեպք, որ նա դիմած լիներ ինձ: Բայց այսօր վերջին օրն է, ըստ երևույթին, այսօր հնարավոր է ամեն ինչ:

— Սա քեզ...— ասաց նա՝ դեպի ինձ մեկնելով իր ձեռքը: Երկու մատների արանքում նա բռնել էր շատ փոքրիկ մի ծաղիկ՝ կապույտ ծաղիկ:

— Ի՞նձ...— կրկնեցի ես՝ ծաղիկը վերցնելով:— Շնորհակալություն: Իսկ ի՞նչ ծաղիկ է սա:

— Հոտ քաշիր՝ կհասկանաս,— ասաց նա իր հանգիստ և կամացուկ ձայնով:

Նախքան հոտ քաշելը ես սկսեցի զննել ծաղիկը: Դրա կապույտ գլխիկն ուներ համարյա ելակի ձև և ելակի հատիկների նման բաղկացած էր բազմաթիվ մանր ծաղիկներից: Գլխիկը նստած էր սնամեջ և ողորկ կոթի վրա՝ օձաձաղկի կոթի նման: Ծաղիկն իր կոթով մի քիչ էր միայն երկար իմ ճկույթից: Անծանոթ ծաղիկ էր, ես առաջին անգամն էի տեսնում այն:

Եթե մեր դասարանցի մի ուրիշ աղջիկ կամ տղա տար ինձ այդ չնչին ծաղիկը, ես արհամարհանքով մի կողմ կնետեի այն: Բայց տվել էր աչքից վրիպած աղջիկը՝ առաջին անգամ ողջ տարվա ընթացքում դիմելով ինձ: Ուստի և, որպեսզի չվիրավորեմ նրան, ես ծաղիկը մոտեցրի դեմքիս՝ հոտ քաշելու համար:

Մի սքանչելի բույր, չափազանց նուրբ, հազիվ որսացվող. արբեցրեց ինձ և մի վայրկյանում թունդ հանեց իմ ամբողջ էությունը: Ես սկսեցի շնչել այդ բույրը նորից ու նորից, վախենալով, թե նա կցնդի, կանէանա:

Ոչ դրանից առաջ և ոչ էլ հետո իմ ողջ կյանքում ես այլևս չեմ շնչել այդպիսի բույր: Ոչ միայն բույր. ես կյանքում երբեք չեմ զգացել այդպիսի քնքշություն՝ ոչ երանգների, ոչ հնչյունների: Ինձ թվաց, թե ես նախքան այդ ծաղիկը հոտոտելը եղել եմ մի կոպիտ սարքված մեքենա, ասենք թե՝ քար ջարդող, և մի վայրկյանում վերածվեցի ինչ-որ ճշգրիտ մեխանիզմի, նրբացա, բարդացա, որպեսզի կարողանամ որսալ, ընբռնել այդ բույրը:

Ես շնչում ու շնչում էի կապույտ ծաղկի բույրը՝ մոռացած աղջկան, մոռացած դաշտը, ամբողջ աշխարհը: Ի՞նչ ծաղիկ էր դա... «Հոտ քաշիր՝ կհասկանաս»,— ասաց աղջիկը: Եվ ես հասկացա առաջին իսկ վայրկյանից: Դա բույր չէր, այլ սիրո ամաչկոտ խոստովանություն...

Ես հուզված բարձրացրի աչքերս ծաղկից: Բայց աղջիկն այլևս կանգնած չէր իմ առջև: Նայեցի շուրջս: Նա չկար: Նայեցի ավելի հեռուն: Նա չէր երևում դաշտում ոչ մի տեղ...

Կապույտ ծաղիկը մատներիս արանքում բռնած, ես սկսեցի փնտրել նրան: Բայց նա չկար: Մի քիչ հետո իմ որոնումը դարձավ խելահեղ, ես դիմում էի սրան-նրան, հարցնում աղջկա մասին, բայց ոչ ոք չէր տեսել նրան: Գուցե և տեսել էին, բայց չէին նկատել, չէ՞ որ նա միշտ վրիպում էր աչքից...

Ի՞նչ եղավ նա, չքացա՞վ, ի՞նչ է: Ես նույնիսկ իզուր էի հարցուփորձ անում, ամբողջ դաշտն իմ աչքի առաջ էր, ես տեսնում էի բոլոր տղաներին և աղջիկներին մեկ առ մեկ, բայց նա չկար: Խոտը բարձր չէր դաշտում, ես տեսնում էի նաև բոլոր նստածներին, պառկածներին: Աղջիկը չկար նաև նրանց միջև... Այնուամենայնիվ ես շարունակեցի հարցուփորձել:

Վերջապես իմ բախտը բերեց՝ եթե միայն բախտ էր դա: Մեր դասարանի աղջիկներից մեկն ասաց.

— Նա գնաց տուն: Այսօր նա մեկնելու է իր ծնողների մոտ: Ես դա պատահաբար իմացա երեկ, դպրոցում: Ի՜նչ տարօրինակ աղջիկ է, գնաց առանց որևէ մեկիս հրաժեշտ տալու: Քեզ նույնպե՞ս:

— Ոչ,— ասացի ես կամացուկ,— նա ինձ հրաժեշտ տվեց: Միայն ինձ...

Եվ հեռացա:

Այդ ինչի՞ց է, որ երբեմն, թեև ոչ մի պատճառ չկա, բայց կուրծքդ ուռչում է անտանելի թախծից, և դու պատրաստ ես արտասվելու... Ես չգիտեմ, թե որտեղ էր ապրում այդ աղջիկը մեր քաղաքում. ոչ ոք չգիտե: Ես չգիտեմ, թե որ ժամին է մեկնելու նա, որ գնացքով: Եվ արդյո՞ք գնացքով, ոչ թե ինքնաթիռով: Կարճ ասած՝ ես այլև երբեք չեմ տեսնի նրան.. Ես հիշեցի կապույտ ծաղիկն իմ մատների արանքում: Դա միակ բանն էր, որ մնացել էր աչքից վրիպած աղջկանից: Ես դա նորից մոտեցրի դեմքիս և սկսեցի շնչել, շնչել... Երանի հնարավոր լիներ ամրացնել, պահպանել, ընդմիշտ պահել դրա բույրը, թույլ չտալ, որ ցնդի, անէանա... Բայց նույնիսկ այդ կարճ րոպեներին բույրը դարձել էր համարյա աննկատելի, շուտով չքանալու էր:

Հարկավոր էր գտնել ուրիշ այդպիսի ծաղիկներ, կազմել մի ամբողջ փունջ, շնչել նորից ու նորից, ավելի առատ: Հարկավոր էր հանել դրանք արմատով, վերցնել հողով, տանել տուն, տնկել թաղարի մեջ, միշտ ունենալ ինձ մոտ: Հարկավոր էր, վերջապես, իմանալ, թե ի՞նչ ծաղիկ էր դա..

Ամրացնելով փոքրիկ ծաղիկն իմ կոճկատեղում, ես սկսեցի դաշտի բազմագույն ծաղիկների մեջ փնտրել իմ կապույտ ծաղիկը: Բայց փնտրել հարկավոր էր ուշադիր, գետնին ընդհուպ, մյուս ծաղիկների և բույսերի տակ:

Եվ ես չգտա այդ ծաղիկը... Իմ շուրջը երգում էին, ծիծաղում, խոսակցում, զբոսնում, իսկ ես, շարունակ ավելի և ավելի խելահեղ, փնտրում և փնտրում էի այդ ծաղիկը: Եվ չգտա: Ես ծունկ էի չոքում, ետ տանում խոտերը, զննում ամեն մի անկյուն, ծնկաչոք անցնում տեղից տեղ: Բայց ծաղիկը չկար...

Ես նայեցի իմ կոճկատեղին: Այնտեղ ևս, ծաղիկը չկար: Խոնարհված դիրքով ես կորցրել էի այն և չէի նկատել...

Դա ամենից ավելի վիշտ պատճառեց ինձ, որովհետև դա միակ ծաղիկն էր և նվիրված էր աչքից վրիպած աղջկա կողմից...

Հուսահատված, ես վեր կացա, նայեցի շուրջս: Ինձ նորից թվաց, թե դաշտը՝ դա կյանքի սիմվոլն էր, իսկ կապույտ ծաղիկը՝ անկրկնելի սիրո: Բայց, բարեբախտաբար, ինչպես համոզվեցի հետագայում, այդ այդպես չէր: Իմ կյանքը դուրս եկավ ավելի բարդ, ավելի հետաքրքիր ու բազմազան, քան Շիրակի այդ դաշտն էր, և այնտեղ ես քաղեցի ավելի բազմապիսի ծաղիկներ: Բայց ոչ աչքից վրիպած աղջկան, ոչ նրա նվիրած կապույտ ծաղիկը ես այլևս չտեսա:

Չգիտեմ, բուսաբաններին ծանո՞թ է այդ ծաղիկը...

1956